

դեանց 5 ր., Գրիգոր քահանայ Թումանյանց 6 ր., Գրիգոր քահանայ Բարաքովսկանց 5 ր., Թադէոս վարդապետ յաջորդ 5 ր., Մկրտիչ քահանայ Տէր-Յովսէփեանց 3 ր., Յովսէփեան Խան-հակեանց 25 ր., Խորայիլ Մամիկոնեանց 3 ր., Յակոբ և Յովհաննէս Լիսիկեանց 25 ր., Աղէք-սանդր Ղուկասեանց 15 ր., Միրզաջան Բարու-չեանց 25 ր., Մինայ Ա. Թեմուրեանց 10 ր., Փիրադայ Ա. Թեմուրեանց 10 ր., Երեք անյայտ անձինք 20 ր., Երկու անյայտ անձինք 6 ր., Եղբայրք Ափանտեանց 100 ր., տիկնայք Ափա-նտեանց 20 ր., Եղբայրք Մարիանց 25 ր., Ա-ղայ Աղայեանց 15 ր., Սարգիս Ա. Գրիգորեանց 10 ր., Մարտիրոս Սափարեանց 3 ր., մահտե-սի Իվան Սահով 5 ր., Սէրօք Տէր-Մար-տիրոսեանց 2 ր., Մելիք Բաղդասարեանց 5 ր., Խաչատուր Մելիքեանց 5 ր., Մարտիրոս Կար-չինեանց 3 ր., մահտեի Բէրօք Տէր-Մարտիրո-սեանց 25 ր., Մարտիրոս մահտեի Բօջարեանց 3 ր., Միխայիլեք Ղազարեքեանց 3 ր., Շամիր Տէր-Յովսէփեանց 3 ր., Յովհաննէս մահտեի Արքանեանց 3 ր., Աղէքսանդր Նազարիչ Մելի-քեանց 15 ր., Համբարձում Ղարիբեանց 10 ր., Մելիք Մկրտչեանց 16 ր., Իվան Ս. մահտեի Օ-հաննէսեանց 10 ր., Մկրտիչ Մանուկեանց 10 ր., Եսայի Ղազարեանց 3 ր., Ազաջան Մայի-լեանց 5 ր., Ստեփան Շաքեանց 3 ր., Յարու-թիւն Նանասեանց 15 ր., Յովհաննէս փաթա-լեանց 10 ր., մահտեի վերաք Մկրտումեանց 10 ր., Միխայիլ Սարգիսեան Աղիզեանց 3 ր., Գրիգոր Սահեանց 5 ր., Մամիկոն Տէր-Նիքի-մեանց 5 ր., Գրիգոր քահանայ Տէր-Մակարեանց 10 ր., Ավետիս Յովհաննէսեանց 10 ր., Պողոս Մարգարեանց 10 ր., Աստուածատուր Բաղադո-խեանց 5 ր., Կարապետ Վ. Սիմէոնեանց 3 ր., Յա-կոբ վարժապետ Տէր-Յարութիւնեանց 5 ր., Յովսէփ մահտեի Պետրոսեանց 5 ր., Արքամ Մելի-քեանց 10 ր., Աղէքսանդր Մկրտչեանց 3 ր., Յովհաննէս Աւագեանց 3 ր., Աւագ Հայրեանց 25 ր., Միխայիլ Համափիւռեանց 5 ր., Մեծ-լում Մելիք-Շահնազարեանց 5 ր., Սողոմոն Նալակարեանց 10 ր., Յովսէփ մահտեի Մնա-ցականեանց 10 ր., տիկին Մարիամ մահտեի Մնացականեանց 2 ր., տիկին Խորդայ 1 ր., Սիւրբ Սահեանց 5 ր., Ավետիս Կիրակո-սեանց 25 ր., Թոստոմ Սարգիսեանց 5 ր., Աննայ Յովհաննէսեան Պրօքոպօպեանց 10 ր., Մարգարեք Մելիքեանց 5 ր., Գրիգորեք Մե-լիք-Շահնազարեանց 3 ր., Ավետիս Աստուածեանց 3 ր., Ավետիս Մկրտումեանց 3 ր., Խաչատուր Վար-դանեանց 5 ր., Գրիգոր Ստեփանեանց 3 ր., Ճան խոջայեանց 3 ր., Համբարձում Օհաննէ-սեանց 3 ր., Ասլան Մոսէսեանց 10 ր., Աւագ Սահեանց 10 ր., Օհաննէս Մարտիրոսեանց 3 ր., Սիմոնեք Զօրաբեանց 2 ր., Սիմոն Վարդա-նեանց 5 ր., Աղէքսանդր Տէր-Վեորգեանց 3 ր., Խորայիլ Կարրիչեանց 5 ր., Նիքիմ Նիկիթա-րեանց 3 ր., Սողոմոն Եսարիգովեանց 10 ր.,

Մկրտիչ Օհաննէսեանց 5 ր., Համբարձում Հա-րարեանց 3 ր., Ազարի Մնացականեանց 5 ր., Աղա տրաքու Առաջանեանց 2 ր., Սարգիս Նիքիզարեանց 1 ր., Յարութիւն Մատթէոսեանց 1 ր., Բաղիչ Միրզայեանց 1 ր., Մկրտիչ Հախ-վերդեանց 1 ր., Մոսէս Խաչատուրեանց 1 ր., Ա-ստուածատուր Ղազարեանց 2 ր., Գրիգոր փա-փիլեանց 1 ր., Յովհաննէս Սիմէոնեանց 1 ր., Եղ-բայրք Միսթարեանց 2 ր., Մանուէլ Ամիրխա-նեանց 3 ր., Շամիրեք Բաղադեանց 5 ր., Մի-տիչ Համափիւռեանց 1 ր., Աղէքսանդր Վար-դազարեանց 1 ր., Աւետիս Համափիւռեանց 1 ր., Սողոմոն Առաքելեանց 1 ր., Աւագ Խեչու-մեանց 1 ր., Պետրոս Սափարեանց 1 ր., Պողոս Վարդանեանց 1 ր., Սահ Տէր-Սահեանց 5 ր., Արտաշէս Մատինեանց 5 ր., Մկրտիչ տրաքու Օհաննէսեանց 3 ր., Սիւրբ Աթաբեանց 3 ր., մահտեի Յովհ. Վարդապետեանց 10 ր., Սիւր մահտեի Աղաբեքեանց 5 ր., Գրիգոր Գասպ-րեանց 3 ր., Եղբայրք Ս. Ղազարեանց 15 ր., Եղբայրք Մնացականեանց 15 ր., Սարգիս Աւա-գեանց 5 ր., Սիմէոն Հայրումեանց 5 ր., Մի-խայիլ Մելիքեանց 5 ր.,

Գումարն է 1166 ր. տուած է մէկ չքաւոր Վանդի մարդու 26 րուբլի, մնաց 1140 րուբլի, զրկած եմ փոստով 700 րուբլի, եւ Երկրորդ ան-գամ 275 րուբլի, այժմ յունիսի 17-ին ստացեք 165 ր. Ընդամենը 1140 րուբլ. առանց փոստի ծախսերին:

Մարտիրոս Նաբաթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Ս. ՊԵՏՐՔՈՒՐԻՐԻՅՈՒՆՆԵՐԻ մի ժամանակ է տեղիս հայ հասարակութիւնը հա-ւաքել էր մի գումար աղքատ հայ ուսանող-ներին օգնելու համար և յանձնել է այդ գու-մարը ուսանողներին: Աւանդուքները չունենալով միջոց պահել իրանց մօտ իրանց ընծայած գու-մարը, պահ տուեցին այդ գումարը մի հարուստ հայ վաճառուին: Սա տուեց ուսանողներին մի ստացական: Այժմ ուսանողները պատահամբ Կորցրին այդ ստացականը, իսկ հարուստ կրէ-ստար ուրանում է իր պարտքը և փողերը յետ չէ տալիս, ասելով որ երկէք ոչինչ պահ տուած չէն իրան:

Երեանի «Պատկ» լրագիրը հաստատում է իր վիրջին համարում վեհափառ Կաթողիկոսի ան-բուժելի Տիեզերութեան լուրը:

Յունիսի 23-ին Թիֆլիսի ռուս թատրոնական խումբը ներկայացրեց պ. Պալմի «Господа из-биратели» նոր պիէսան: Գլխավոր դերերից մէկը խաղում էր տիկին Բայֆ, նոյնպէս խաղում էր և ինքն հեղինակը: Թատրոնը լի էր և պիէսան որ կենդանի կերպով նկարագրում է ռուս քա-

ղաքների քաղաքային ընտրութիւնների գաղտնի ինտրիգները, մեծ համակրութեամբ ընդունեցաւ հասարակութիւնը: Հեղինակը ու-ղեց ցոյց տալ որ քաղաքային ընտրութիւն-ների գաղտնի թելադրողը ոչ թէ հասարակա-կան, այլ անձնական շահ է լինում մեծ մասամբ: Նոյն իսկ պիէսան մեծ բեմական արժանաւո-րութիւններ ունի, գրուածքի սիրոյ ինտրիգան շատ լաւ է դուրս բերված և թէ կանանց և թէ տղամարդկանց տիպերը այնքան գեղեցիկ և կենդանի են, որ կարծես մեր ամենօրեայ ծա-նոթները լինէին:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը խնդ-րում է մեզ յայտնել որ վարչութեան մէջ բաց-ված է ստորագրութիւն ի Տէր Հանգուցեալ Թա-զաւոր Կայսր Ալէքսանդր II-ի յիշատակին Մօսկվայի կրեմլի մէջ հիմնվող արձանի համար: Ստորագրել կարելի է վարչութեան մէջ ամեն և օր, առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամ կէսօ-րից յետոյ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՐԻՔԻԱ ԵՒ ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Կ. Պօլսից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետեւեալը:

Ռուս զիւլումատիան, որ մի քանի ժա-մանակ լուռ էր մնում, կրկին սկսում է գոր-ծել: Նախ և առաջ նա ձեռք է տալիս Չէքոսլովակիայի ինդրին, այդ երկրի սահման-ների վերաբերութեամբ Միւս պետութիւն-ների դեպքաները այդ ինդրի վերաբերու-թեամբ միացան ռուս դեսպանատան հետ: Ռուսաստանը զեկափարում է, ըստ երեւոյ-թից, բոլորական ինդրը և բացի սորա-նից ցոյց է տալիս ձգտում յարուցանել և Թուրքիայի Ֆինանսական ինդրը, յայտ-նելով իր պահանջները գինուորական կօն-տրիբուցիայի (վարձատրութեան) վրա, որ Թուրքիան մինչև այժմ Ռուսաստանին չէ վճարել:

Վերջապէս նորերումս հայոց պատրիարք Ներսէսը յայտնել է իր բարեկամներից շա-տերին, որ իր ստացած ամենաճիշդ տեղե-կութիւններին համեմատ, Ռուսաստանը վճարել է ամենաճանր կերպով ձեռք տալ հայոց ինդրին և ամենաուսուրտ կերպով յանձն է առել համոզել միւս պետութիւն-ներին վերջնական լուծում տալ այդ խն-դրին:

պատասխանը շատ կարճ է և մի և նոյն ժամա-նակ բոլորովին մութ:—Ճշմարիտ է, պ. Լամիրը չը կարողացային ժողովում ժողովրդական վիպասանութեան մասին, բաւական հա-մարելով միայն ցոյց տալ նրա վրա, իբրեւ ա-ռաջին աղբիւր հայոց հնագոյն պատմութեան. բայց պրա պատճառն էլ, եւ կարծեմ, այն էր, որ գիտնական պարոնի բեֆէրատի նիւթը ուրիշ բան էր—այսինքն—Մար-Արասի անհաւատի և մոպցածին լինելը. իսկ բուն ժողովրդական վիպասանութիւնը առանձին նիւթ է, որ ինչ-պէս ինքն պ. Լամիրը ասաց, կը կազմէ նրա բը-րօշիւրի երկրորդ մասը և բաւականին երկար լինելու պատճառով կարող չէր կարգադրել հնագիտական ընկերութեան այդ նիստում: Աւ-րեմի գրքոյկը բաղկացած կը լինի երկու մաս-նից. տառնում՝ հերքում է Մար-Արասը իր պատմութիւնով, երկրորդում՝ ապացուցանում է հայոց հնագոյն պատմութեան աղբիւրը—ժո-ղովրդական վիպասանութիւնը:—Ճէ-լիտեմիտին պէտք էր մի փոքր համարութիւն ունենալ և այդ գրքոյկը կարգադրուց յետոյ ար-դէն սրամտութիւններ անել. բայց եթէ նա այդ-քան անհամբեր էր, լաւ չէր հէնց այնտեղ՝ ժո-ղովում՝ յայտնել իր կարծեք պ. Լամիրին, հէնց այնտեղ բանակաւ սկսել բեֆէրատի հե-տ. գրուցէ այն ժամանակ աւելորդ լինել իր ֆէլի-տեմը...

Առ այժմ այսքանը բաւական է պ. Լամիրի բեֆէրատի մասին, կը սպասենք նրա գրքոյկի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տուրիսի արշաւանքի և Կայրօլի միւսա-տրութեան անկման պատճառով ընդհատ-ված բարեկամական յարաբերութիւնները Ֆրանսիայի և Իտալիայի մէջ վերականգն-ված էին թվում: Ֆրանսիական կառավարու-թեան խաղաղասէր յայտնութիւնների շնոր-հիւ: Իտալական միւսատրութեան փոփո-խութիւնը չը փոխեց Իտալիայի արտաքին քաղաքականութիւնը, որ այժմ էլ առաջ-վայ պէս խաղաղ բնաւորութիւն ունի: Իտա-լացիների և Ֆրանսիացիների անսպասելի կոիւր Մարսելի մէջ երկու պետութիւնն-րի յարաբերութիւնները վստահաւոր դար-ձրին: Արեւահեղ կռիւնները այնքան շուտ չեն մոռացվում, որքան քաղաքական ան-բաւականութիւնները երկու պետութիւնն-րի մէջ: Մրցութեան և թշնամութեան զգացմունքները, որոնք տրտայտովում են փողոցային կռիւներով, աւելի մեծ նշանա-կութիւն ունեն, քան թէ պաշտօնական բանակաւորները Ֆրանսիական և Իտալական պաշտօնական լրագիրների մէջ: Մարսիլի մէջ պատահած անկարգութիւնների շնոր-հիւ նոյնը կրկնվեցաւ և Իտալական մի քա-նի քաղաքների մէջ, որոնց ազգաբնակու-թիւնը սկսեց վրէժ առնել Ֆրանսիացիներ-րից: Մարսելի կռիւնները համար փոխադարձ ատելութիւնը տարածված է երկու ազգու-թիւնների յայտնի մասերի մէջ: Իտալացի-ները սկսում են յիշել քաղաքական հին հաշիւները, որոնց մոռացել են կառավա-րութիւնները, բայց որոնք մնացել են ժո-ղովրդի յիշողութեան մէջ: Իտալացիների կարծեքով, Ֆրանսիացիները պատճառ են դարձել Իտալական ազգային դժբաղու-թիւնների Միւնչե անգամ Ֆրանսիայի արած ծառայութիւնները Իտալական միութեան գործին և Իտալացիների ազատվելուն աւ-ստրիական լծից ժողովուրդը վերաբերում է Նապօլեօնի յափշտակող քաղաքականու-թեանը: Իտալացի ազգաանները մտաբե-րում են Ֆրանսիայի պահպանողական դերը Հռօմի և պապական կայսրածինների վերա-բերութեամբ: Նրանք յիշում են այն թշնա-մական և ծաղրիլի ընդունելութիւնը, որ գտաւ Ֆրանսիական ազգային ժողովի մէջ Իտալական ժողովուրդական հերոս Գարիբալ-դին, որ կուել էր գերմանացիների դէմ:

Լոյս տեսնելուն, երբ կարելի կը լինի՝ առանց այս և այն սրամտութիւնների, կամ անփաստ ու անհիմն դատողութիւններով—աւելի հաստատ ֆակտերի վրա հիմնել մեր կարծեքները, թող դրանք լինէին հակառակ կամ համաձայն պ. Լամիրի կարծեքներին:

Վերջացնում եմ նամակս՝ հերքելով հայ լը-րագրութեան մէջ տարածված լուրը—իբր թէ այս ամառ լինելու չէ Թիֆլիսում V հնագիտա-կան ժողովը. ժողովը՝ ինչպէս որ դեռ անցեալ տարի վճռած էր՝ սկսվելու է առաջիկայ սեպ-տեմբերի 8-ից և կը տեւէ, երեք թէ. 2—3 շա-բաթ, սրա մասին դեռ ապրիլին յայտնեց լրա-գիրներում: Մօսկվայի հնագիտական ժողովը նա-խագահ կ'ունի Աւարովը:

Ցանկալի էր, որ մեր ժողովրդական գը-րականութիւնը վերաբերեալ ժողովածուներ կազմող և հրատարակողները (պ. Նաւասարդեանց և այլք) աշխատէին մինչև սեպտեմբեր լոյս ըն-ծայել իրանց ժողովածուներից որքան հնար է որպէս զի կարելի լինէր (ինչպէս մի քանիսը ուզում են) ներկայացնել այդ աշխատութիւն-ները հնագիտական ժողովին: Առհասարակ լաւ կը լինէր, որ հնագիտութեամբ, պատմու-թեամբ և ժողովրդակ. գրականութեամբ պարա-պող հայ անձինք հոգ տանէին իրանց աշխա-տութիւնների վրա և օրով առաջ պատրաստ էին իրանց անեկը—եթէ ունեն ինչ անելիք, բայց ամօք էլ կը լինէր, եթէ չունենան ինչ անելիք:

ված էին և պահվում հին արքունի զիւանդներով (Խոր. Ա. զէ. Ժ.) և այլն: Զարմանալի է և միանգամայն անհասկանալի, ինչու Վաղարշակը մի կողմ թողնելով տեղական հաւաստի աղբիւր-ները, զիմում է ասորի մարդու և հայոց պատ-մութիւնը պտուտ է Նինուէի զիւանդում:

Բ) Պ. Լամիրը հաղորդեց, որ Մար-Արասը կա-րող չէր երթալ Նինուէ և այնտեղի զիւանդից բերել հայոց պատմութիւնը—քանի որ ոչ միայն Վաղարշակի օրով, այլ նրանից էլ 200 տարի առաջ այդ քաղաքը քանդված, աւերակ էր դարձած, մինչև հետքը անգամ չէր կարելի նը-մարել:

Գ) Խորենացին ասում է, թէ Վաղարշակ՝ ըս-տանալով Մար-Արասի ձեռից հայոց հաւատարի պատմութիւնը և համարելով նրան իր գանձե-րից ամենաթանկագինը, զգուշութեամբ պա-հում է իր արքունիքում—նրա մի մասը արձա-նագրել տալով կոթողի վրա: (Խոր. Գր. Ա. զէ. Ժ.) Սրա առիթով պ. Լամիրը նկատեց, ինչպէս է, որ ոչ մի պատմիչ—թէ յոյն, թէ ասորի և թէ մի այլ ազգի—ամենևին չեն յիշում այդ-պիսի մի նշանաւոր արձանագրութեան մասին, եթէ նա արդարեւ գոյութիւն ունէր, և այն էլ այնպիսի մի կենսորոնում, ինչպէս էր Մթերին մայրաքաղաքը: Յետոյ—ինչպէս է պատահել, որ Մար-Արասի այդ պատմութիւնը միայն Խորենա-ցու ձեռքն է ընկել. մինչդեռ ոչ նրանից առաջ և ոչ նրանից յետոյ ոչ ոք չէ տեսել այդ գիրքը և չէ լսել նրա մասին: Մինչև անգամ Ազաթան-

գեղորդ (Խորենացուց մօտ 100 տարի առաջ), որ իր պատմութիւնը գրեց Տրդատ Թաղաւորի հրամանով և որը՝ երևի թէ՛ իրաւունք կուեն-նար քրքրելու արքունի զիւանդները, Ազաթան-գեղորդն էլ ամենևին չէ յիշում Մար-Արասի մա-սին: Հապա ճրտեղ էր այդ գիրքը մինչև Խո-րենացին, ճրտեղից է գտել նրան ինքն Խորե-նացին—այդ նա ամենևին չէ հաղորդում մեզ:

Այս և սրանց նման ուշադրութեան արժանի շատ փաստեր մէջ էր բերում պ. Լամիրը, վեր-լուծելով այդ փաստերը և ցոյց տալով Խորե-նացու իր խօսքերին անդադար հակասութիւն-ները և կամ կասկածի և տարակուսանքի առիթ տուող հանգամանքներ—նրա առաջին գրքի վե-րաբերութեամբ, որ պարունակում է իր մէջ հա-յոց հնագոյն պատմութիւնը, Բայց՝ ինչպէս երե-ւում է՝ ռուս ֆէլիտեմիտը բնաւ չէ հասկա-ցել ոչ պ. Լամիրի գիտաւորութիւնը և ոչ նրա բեֆէրատը, նա կարծում է, որ հերքելով Մար-Արասի գոյութիւնը, զրանով իբր թէ հետեւաբար հերքվում է և բոլոր հայոց պատմութիւնը: Դատ սխալ կարծեք. կարող է չը լինել Մար-Արասը, կարող է չը լինել նրա պատմութիւնը, բայց կարող չէ չը լինել հայոց հնագոյն պատ-մութիւնը, որովհետեւ այդ պատմութիւնը ինչ-պէս անպարզեցանում է պ. Լամիրը—յօրինված է ժողովրդական վիպասանութիւնը: Գուցէ այդ խօսքը—«ժողովրդական վիպասա-նութիւն» ֆէլիտեմիտը չէ հասկացել և կամ՝ չէ ուղեցել հակառակ, նկատելով, թէ այդ